

Եւ Աստուծոյ միջեւ խզուած շղթային: Թէ անօրօրան այս Մանուկը իրեն իբրեւ օրօրոց ընտրած էր բովանդակ աշխարհը: Թէ ան մարմնացած սէրն էր, աշխարհը տաքցնող ոգին, որ այս խաղաղ գիշերով կը բանար երկնքին սիրտն ու մարդուն արգանդը:

Կը խոնարհին նորածինին առջեւ՝ անոր ընծայելով խորհրդաւոր նուէրներ, պատրաստուած ո՛վ գիտէ որ ծիրանածինին համար: Եւ անոնց հետ միասին կը խոնարհին կրօնն ու իմաստութիւնը հին աշխարհին:

Այս տարօրէն գեղեցիկ եւ սրտառու տեսարանին մէջ կու գան հովիւները, մինչ վերը երկնքին մէջ կ'երգեն հրեշտակներ: Ո՛րքան պիտի ուզէի որ երկնքի ու երկրի այս հաշտութեան վրայ Աստղը փշուր-փշուր տարտղնուէր լուսակապոյտ երկնքին մէջ, գրելու համար դարերով սպասուած կախարդական պատգամը, «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն»:

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ (ՏԷՐՏԷՐԵԱՆ)

ԽՕՍՔ ԵՒ ԽՈՇՔ

Թէեւ չիցնալը լաւ է, սակայն աւելի լաւ է գիտնալ՝ իցնալէ ետք ոտքի կանգնել, որովհետեւ Առակաց Գիրքը կ'ըսէ «Արդարը եթէ նոյնիսկ եօթը անգամ իցնայ, պիտի դարձեալ կանգնի» (ԻԴ:16):

Մէծ է այն մարդը, որ գիտէ իր գործած սխալները պարագաներու չվերագրել, եւ կամ ինքնարդարացման համար իր գործած սխալները ուրիշի ուսերուն չբեռցնէ:

Յանցանք մը ծածկել փորձելը մեծութիւն չէ, այլ փոքրութիւն:

Յանցաւորը իր գործած սխալը խոստովանելով չփոքրանար, այլ Ս. Գրքի հերոսներէն, Յեսէի որդի՝ Դաւիթ թագաւորի նման կ'արժանանայ Աստուծոյ շնորհներուն:

Մեծութիւնը բացարձակ ըլլալէ աւելի յարաբերական բան մըն է:

Հայր Աստուած իր արարածներէն բացարձակ մեծութիւն պահանջելէ առաջ, կը պահանջէ որ անոնք ունենան իրենց միջաւայրին եւ կարելիութեանց սահմաններուն մէջ ապրուած մաքուր ու լաւ կեանք մը:

«Դրախտ կորուսեալի» հեղինակ՝ Ճոն Միլթըն կ'ըսէ. «Թագաւորէ մը աւելի մեծ է ան՝ որ գիտէ զսպել իր ախորժակները, կ'իշխէ իր անձին, զգացումներուն եւ վախերուն վրայ»:

Առակաց Գրքի հեղինակը կ'ըսէ. «Իր կիրքերը զսպել գիտցողը աւելի մեծ է քան քաղաք մը գրաւողը»: